117 թ. Մբրուան ի. Մուհամմեդ, Հայաստանի կուսակալը, ուղարկեց մի զօրագունդ Ալանաց երկիրը, որ առաւ երեք բերդեր, եւ մի այլ՝ Տումանշահի երկիրը, որի բնակիչք հնազանդեցան։

132 թ. Խառանի բնակիչք խուռն բազմութեամբ քարկոծեցին Սայիդ ի. Հիշամին, Սուրահիլ ի. Մասլամայ ի. Աբդուլմալիքին, Աբդուլմալիք ի. Բիշր Տաղլաբիին եւ Զորբորդ Հայոց իշխան Կուշանին։[1]

132 թ. Աբու Աբբաս դրեց իւր եղբայր Աբու Ջաֆարին Միջագետքի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ կուսակալ։

132 թ. Միջագետք, Հայաստան եւ Ատրպատական կը կառավարէր Աբդուլլահ ի. Մուհամմեդ։[2]

133 թ. Հայաստանի կառավարիչն էր Սալհ. ի. Սուբայհ։

134 թ. Ջաֆար հեռացրեց Սալհ ի. Սուբայհին իւր պաշտօնից եւ նորա տեղ նշանակեց Եզիդ ի. Ուսայդին։

135 թ. Հայաստան կը կառավարէր Եզիդ ի. Ուսայդ։

137 թ. Հայաստանի կառավարիչն էր Հասան ի. Քահթաբ։

145 թ. Բաբ-էլ-աբուաբի թուրքերը եւ խազարները արշաւեցին Բաբից Հայաստան եւ կոտորեցին մուսլիմներից մեծ բազմութիւն։

147 թ. Աստարխան Խուարազմին արշաւեց թուրքերի բազմութեամբ Հայաստանի սահմաններում ապրող մուսլիմների վերայ, դերեց նոցանից եւ քրիստոնեաներից մեծ բազմութիւն, մտաւ Տփղիս եւ սպանեց Հարբ ի. Աբդուլլահ Ռավանդիին։

---

1 Թերեւս «Գուսան» անուան աղաւաղումն է։

2 Ջաֆարի օգնական Փոխկառավարիչը։